«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԱՐՑԱԽՅԱՆ ԽՆԴՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Շուշան Ասկարյան
Արցախի պետական համալսարան,
գրականության և լրագրության ամբիոն, բ.գ.թ.
shush22@yandex.ru

Զանգվածային լրատվության միջոցներով ազգամիջյան հակամարտության լուսաբանումն ունի յուրատիպ դինամիկա, որն փաստացի հակամարտության շրջանակներում անընդհատ ազդում է իրադարձությունների դրական կամ բացասական զարգացումների վրա: Սովետական մամուլում էական դեր է կատարել կրոնական հակամարտությունների լուսաբանումը: Օրինակ, արցախյան շարժման սկզբնավորման օրերին Մեծ Բրիտանիայում լույս տեսնող «Independent»-ը վկայակոչելով խորհրդային «Իզվեստիա» օրաթերթին, բերում է Բաքվում հակահայկական ցույցերի մի պատկեր, որտեղ « հազարավոր ցուցարարներ խարույկ վառելով, դրսում են մնացել ամբողջ գիշեր, տարել կարմիր թուրքական եւ կանաչ իսլամիստական դրոշները, նվաստացրել քրիստոնյա հայ բնակչությանը»:[1] Արեւմտյան, հատկապես՝ ամերիկյան մամուլում արցախյան շարժման առաջին անդրադարձը արտահայտում էր ակնհայտ անակնկալ, եւ նույնիսկ կասկածներ՝ կապված Հայաստանում եւ ԼՂՀ-ում իրադարձությունների շուրջ: Առաջին հրատարակությունները նաեւ մատնանշեցին նման իրադարձությունների աննախադեպ բնույթը: Հետեւյալ մեջբերումը կարող է ընդհանրացնող պատկերացում տալ ԱՄՆ-ի արձագանքի մասին. «Նախնական տվյալների համաձայն, այսօր 120000 հայեր համախմբվեցին բողոքելու իրենց հայրենիքի մի մասի կորստի դեմ, որը վերջին օրերին երկրորդ նման հավաքն է եւ մեկը ամենամեծ ոչ պաշտոնական ցույցերից,որ երբեւէ հաղորդվել է Խորհրդային Միությունում:[2]

2016 թվականի ապրիլին Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների վերսկսման մասին միջազգային լրատվամիջոցներից առաջինը տեղեկացրեցին «Associated Press»-ը, որին հաջորդեց «ABC News»-ի և «The Washington Post»-ի արձագանքը: «The Washington Post»-ը, նույն աղբյուրներին

[1] Comwell Rupert, “Kremlin Admits Ethnic Crisis is Near Civil War”, The Independent, December 2, 1988.
[2] “120.000 Soviet Armenians Reported in Land Protest”,Los Angeles Times, February 23,1988»:(« An estimated 120000 Armenians rallied today to protest the loss part of their homeland,the second such gathering in recent days and one of the biggest unofficial demonstrations ever reported the Soviet Union».).

հղում կատարելով, ընդգծում է հայկական կողմից խոցված ադրբեջանական ուղղաթիռի մասին[1], ինչը, սակայն, հերքվում է Ադրբեջանի ՊՆ խոսնակի կողմից (ավելի ուշ ԼՂՀ ուժերը ևս մեկ ուղղաթիռ են խոցում և հրապարակում լուսանկարներ ու տեսանյութեր՝ փաստը ապացուցելու համար):

Բացառիկ էր CNN-ի ուղիղ եթերում Ադրբեջանի և ԼՂՀ արտգործ-նախարարներ Էլմար Մամեդյարովի և Կարեն Միրզոյանի մասնակցությամբ ուղիղ հեռարձակումը, որտեղ, փաստացի, Արցախը ներկայացվեց որպես հակամարտության կողմ, իսկ Ադրբեջանի գլխավոր դիվանագետը սկսեց խճճվել իր իսկ կողմից հորջորջվող ապատեղեկատվությունների մեջ:

«Ռուսական ներգրավվածության աստիճանը Լեռնային Ղարաբաղում կարծես աճում է», - պնդում է «Financial Times»-ի մոսկովյան թղթակիցը՝ գրելով. «Ռուսաստանը սկսել է հավելյալ դիվանագիտական ջանքեր գործադրել մի իրավիճակում, երբ Եվրոպայի ամենադժվար հանգուցալուծվող հակամարտություններից մեկը լայնածավալ պատերազմի վերաճելու շեմին է[2]»: Հպանցիկ կերպով նկարագրելով ապրիլի 2-5-ը տեղի ունեցած իրադարձություն-ները՝ թերթի թղթակիցը հատուկ ընդգծում է այն հանգամանքը, որ հայկական և ադրբեջանական կողմերը կրակի դադարեցման մասին պայմանավորվածությունը ձեռք բերեցին Մոսկվայի միջնորդական ջանքերի շնորհիվ, չնայած այն իրողությանը, որ գոյություն ունի «խնդրով զբաղվող Մինսկի խումբ» [3]:«Financial Times»-ը այս առիթով մեջբերում է Լոնդոնում Ադրբեջանի դեսպան Թահիր Թաղիզադեի խոսքը. - «Ինձ մեծապես զարմացրեց այն զգալի ժամանակահատ-վածը, որ պահանջվեց ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներից պարզապես հավաքվելու համար»:

«Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործում ամերիկյան ներգրավվածությանը, ապա Վաշինգտոնում նման քայլի դիմելու մեծ ցանկություն չունեն», - վկայակոչելով Միացյալ Նահանգները ներկայացնող դիվանագետների հետ մասնավոր զրույցները՝ նշում է «Financial Times»-ի թղթակիցը: Ամերիկացի դիվանագետներից մեկը թերթին խոստովանել է, որ Վաշինգտոնում ապրիլի 2-ին չեն ունեցել անգամ Լեռնային Ղարաբաղում ծավալվող իրադարձությունների արբանյակային պատկերը: «Պարզվեց, որ այդ տարածաշրջանը դիտարկող ամերիկյան բոլոր արբանյակները հետևում են կամ Սիրիային, կամ էլ Ուկրաինային», - գրում է «Financial Times»-ը:

«Guardian»-ը ապրիլյան իրադարձություններին արձագանքել է ինը հրապարակումներում. թերթի դիրքորոշումը հարում է «The Times»-ի դիտարկումներին: «Azerbaijan-Armenia conflict is a reminder of Europe's instability»[4] («Ադրբեջան- Հայաստան հակամարտությունը Եվրոպայի անկայունության հիշեցումն է») հրապարակման մեջ առանձնացնենք մի քանի բանալի արտահայտություններ. «Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանը Հայաստանի գերիշխումով չճանաչված անկլավ է Ադրբեջանի ներսում.....Երևանը տարբերակում է սեփական զինված ուժերը Լեռնային Ղարաբազի ՀՈՒ-ից, մինչդեռ Ադրբեջանը

---

[1] https://www.washingtonpost.com/world/at-least-31-reported-killed-in-fighting-between-armenian-azerbaijani-forces/2016/04/02/fc328ab6-f8ff-11e5-8b23-538270a1ca31_story.html

[2] https://www.ft.com/content/3d485610-0572-11e6-9b51-0fb5e65703ce

[3] https://www.ft.com/content/3d485610-0572-11e6-9b51-0fb5e65703ce

[4] https://www.theguardian.com/world/2016/apr/03/azerbaijan-armenia-conflict-europe-instability-nagorno-karabakh («Nagorno-Karabakh autonomous region, with an ethnic Armenian majority ….Yerevan distinguishes its own armed forces from those of Nagorno-Karabakh, while Baku considers them all to be Armenian»)

բոլորին համարում է հայկական»): «Conflict erupts between Azerbaijani and Armenian forces»[1] («Ադրբեջանական ու հայկական ուժերի միջև հակամարտության ժայթքում») հոդվածի մասին նշենք այն փաստը, որ բացի Սերժ Սարգսյան- Իլհամ Ալիեվ հայտարարությունների, ներկայացված է նաև ԼՂՀ մամուլի խոսնակ Դավիթ Բաբայանի կարծիքը՝ նրան անվանելով «speaker of separatist president» («անջատողական նախագահի մամուլի խոսնակ»): Հաջորդ հրապարակումը վերնագրված է «Azerbaijan and Armenia clashes continue for third day»[2] («Ադրբեջանի ու Հայաստանի բախումները շարունակվում է երրորդ օրը») ու հիմնականում ներկայացնում է իրավիճակը ադրբեջանական կողմից՝ կողմնակալությունը քողարկելու համար մեկ անգամ հղում անելով ՀՀ Պաշտպանության նախարարության մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանին:

«Azerbaijan-Armenia conflict: patriotism prevails on both sides»[3] («Ադրբեջան- Հայաստան հակամարտություն: Հայրենասիրությունը գերիշխում է երկու կողմերում») հրապարակման մեջ երկու հայացքներ են հակամարտող երկու կողմերից: Հայաստանում բռնկված հայրենասիրության վերաբերյալ ներկայացվում է Նարինե Գալստյանի կարծիքը. «Հայերը միակ ազգն են, որ խաղաղ ժամանակ արտագաղթում են, բայց շտապում են վերադառնալ տուն, երբ պատերազմ է բռնկվում»:

Հետկոնֆլիկտային շրջանում ՁԼՄ-ների հիմնական խնդիրն է նպաստել մարդասիրական երկխոսության կայացմանը և մարդկանց կողմից պատերազմի բացասական հետևանքների գիտակցմանը:Այս տեսակետից ամերիկյան և բրիտանական հեղինակավոր պարբերականները չեզոք դիրքորոշում են դրսևորում, փոխարենը աընդհատ շրջանառության մեջ է այն միտքը, որ «փխրուն խաղաղությունը կարող է վերաճել նոր պատերազմի[4]», կամ «հետխորհրդային բոլոր երկրներին հատուկ սառեցված հակամարտության սինդրոմի հանգուցալուծման նոր ուղիների փնտրտուքով առայժմ զբաղված են Ադրբեջանի և Հայաստանի նախագահները»[5] (մասնավորապես մատնանշվում է Ռուսաստանի անկարողությունը Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման և դրական լուծում տալու մեջ):

Չնայած արցախյան խնդրի ընկալումներն բրիտանական և ամերիկյան պարբերականներում կրում են խիստ դիվանագիտական մոտեցումներ և զերծ են հետագա առարկայական դրսևորումներ թելադրող գործողություններից, սակայն դրանցում հայտնի քաղաքական վերլուծաբանների և լրագրողների կողմից պարբերաբար տեղ գտած հրապարակումներն նպաստում են, որպեսզի Արցախն ու արցախյան խնդրի մասին տեղեկատվական-վերլուծական բնույթի լրատվանյութերի տարածումը Արցախը ճանաչելի դարձնեն միջազգային լսարանին:

---

1 https://www.theguardian.com/world/2016/apr/02/conflict-erupts-between-azerbaijani-and-armenian-forces

2 https://www.theguardian.com/world/2016/apr/04/azerbaijan-and-armenia-clashes-continue-for-third-day

3 https://www.theguardian.com/world/2016/apr/07/azerbaijan-armenia-nagorno-karabakh-patriotism-prevails-on-both-sides

4 http://www.guardian.co.uk/commentisfree/2010/may/17/nagorno-karabakh-fragile-stalemate

5 http://www.ft.com/cms/s/623411be-aa10-11dd-958b- 000077b07658,Authorised=false.html?desktop=true&ft_site=falcon&siteedition=intl&_i_location=http%3A%2F%2Fwww.ft.com%2Fcms%2Fs%2F0%2F623411be-aa10-11dd-958b-000077b07658.html%3Fdesktop%3Dtrue%26ft_site%3Dfalcon%26siteedition%3Dintl&_i_referer=&classification=conditional_standard&iab=barrier-app

Շուշան Ասկարյան

ԱՐՑԱԽՅԱՆ ԽՆԴՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *Արցախյան խնդիր, ամերիկյան մամուլ, բրիտանական մամուլ, արևմտյան մեդիադաշտ, հակամարտություն*

Հոդվածը ներկայացնում է արցախյան խնդրի ընկալումներն ամերիկյան և բրիտանական հեղինակավոր պարբերականներում՝ խնդրի ներկայացման պատմությունը սկսելով 1988 թվականից արևմտյան պարբերականների էջերում տեղ գտած հրապարակումներից ՝ հասնելով մինչև 2016 թվականի ապրիլյան սրացումը: Կարևորելով զանգվածային մեծ լսարան ունեցող սույն պարբերականների վարած տեղեկատվական-քարոզչական քաղաքականությունը և արցախյան հակամարտության շուրջ ծավալվող ուղեգծի մեկնաբանումները, ուրվագծվում են լրագրային արձագանքների հիմնական օրինաչափությունները և արևմտյան մեդիադաշտի կողմից արցախյան խնդրի ընկալումների հիմնական առանձնահատկությունները:

Шушан Аскарян

ВОСПРИЯТИЕ АРЦАХСКОЙ ПРОБЛЕМЫ АМЕРИКАНСКИМИ И БРИТАНСКИМИ ЖУРНАЛАМИ

Ключевые слова: *Арцахский вопрос,американская пресса, британская пресса, западных медиаполе, конфликт*

В статье представлено восприятие арцахского вопроса известными американскими и британскими журналами, начиная представление истории данной проблемы с начала 1988 года на страницах западных газет и до накала ситуации в апреле 2016года.

Подчеркивается важность информационно-пропагандистской политики этих газет, имеющих огромную аудиторию и комментарий вокруг арцахского конфликта, выявляются основные закономерности журналистских отзывов и основные черты восприятия конфликта со стороны западных СМИ.

Shushan Askaryan

THE PERCEPTION OF THE ARTSAKH PROBLEM BY THE AMERICAN AND BRITISH MAGAZINES

Keywords: *Artsakh problem,American press, British press, Western mediafield, conflict*

The article presents the perception of the Artsakh issue by famous American and British magazines starting from history of this problem since the beginning of 1988 on the pages of Western newspapers up to the escalation of the situation in April of 2016.

The importance of the information and propaganda policy of these newspapers which has a huge audience and comments of the Artsakh conflict are emphasized in the article, besides the main regularities of journalistic reviews and the main features of the perception of the conflict by Western media are revealed.